Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊԸ տնօրեն
_____Լ. Մեհրաբյան
«_____» _____20 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ կառավարման խորհրդի

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա հիմնադիրների կամ մասնակիցների ընդհանուր ժողովն է, որը հրավիրվում և անց է կացվում ոչ պակաս քան տարին մեկ անգամ, և որին պատկանում է ընկերության կառավարման և գործունեության հետ կապված հարցերի վերջնական լուծման իրավունքը: Մասնակիցների ընդհանուր ժողովում յուրաքանչյուր հիմնադիր ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

Ընկերության ընթացիկ գործունեությունը ղեկավարում է գործադիր մարմինը, որը հաշվետու է ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովին: Հիմնադիրների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

ա/ ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը,

բ/ ընկերության գործունեության հիմնական ուղղություններ որոշելը, ինչպես նաև նոր կազմակերպություններ հիմնադրելու և դրանց մասնակցելու հարցերը,

գ/ ընկերության գործադիր մարմին ձևավորելը և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը,

դ/ ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը և հավաստումը,

ե/ ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը,

զ/ ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը,

է/ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը:

«Մեհրաբյանի անվան
բժշկական քոլեջ» ՍՊԸ փոխտնօրեն՝ /Հ.Ա.Բաբայան/